



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ**

**Հետազոտության թեման՝ Ինտեգրված ուսուցման
անհրաժեշտությունը կենսաբանության դասավանդման
գործընթացում**

Առարկան՝ Կենսաբանություն

Հետազոտող ուսուցիչ՝ Վարդանուշիկ Սիմոնյան

**Ուսումնական հաստատություն՝ Ճոճկանի Գոռ Խոլդինյանի
անվան միջնակարգ դպրոց**

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....

3

Գլուխ.1 ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1 Միջառարկայական կապերի դերը ուսումնական

գործընթացում.....5

1.2 Միջառարկայական կապերի ազդեցությունը սովորողների համակողմանի

զարգացման վրա.....9

ԳԼՈՒԽ. 2 ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

2.1 Միջառարկայական կապերի կիրառումը կենսաբանության

դասին.....12

Եզրակացություններ.....19

Օգտագործված գրականության ցանկ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով կրթության արդիականացման հիմնական ուղղությունները, որոնք կենտրոնացած չեն միայն գիտելիքի վրա, այլ ուսումնական գործընթացի արդյունքների մեջ ներառում են նաև մի շարք կարողունակությունների ձեռքբերում կարող ենք ասել, որ դասը, որպես ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնական ձև, ձեռք է բերել բովանդակային նոր կառուցվածք:

Այդ կառուցվածքի գանազան տարրերը հնարավորություն են ստեղծում սովորողին դասից վերցնել ավելին քան գիտելիքն է: Սովորողը դասի մեջ գտնում է հետաքրքրություններ, նորություններ, ինքնուրույնություն, ստեղծելու, հորինելու, նախագծելու հնարավորություն: Ուստի պատահական չէ, որ այսօր հանրակրթության հիմնական նպատակներից մեկը սովորողների մետաճանաչողության զարգացումն է:

Առհասարակ ճանաչողական գործունեության արդյունքում սովորողը հնարավորություն է ստանում յուրացնել առարկայի բովանդակությունը, իմանալ յուրացման համար անհրաժեշտ մեթոդները, հմտություններն ու կարողությունները: Ճանաչողական գործունեության առկայությունը հոգեբանական գործոն է, որն ապահովում է ուսումնական նպատակների իրագործումը:

Ուսումնական գործընթացում սովորողների մղումները ձևավորվում են նրանց կարիքների և հետաքրքրությունների հիմքով՝ ուսուցիչը պետք է բոլոր ջանքերն ուղղի սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը: Ճանաչողական գործընթացներ են՝ ընկալումը, ուշադրությունը, երևակայությունը, հիշողությունը, մտածողությունը, որոնք ցանկացած գործունեության կարևորագույն բաղադրիչներն են: Իր կարիքները բավարարելու շփվելու, սովորելու և աշխատելու համար մարդը պետք է ընկալի աշխարհը, ուշադրություն դարձնի գործունեության որոշակի բաղադրիչների վրա, պատկերացնի, թե ինչ է պետք անել, հիշի, մտածի և արտահայտվի: Հետևաբար, առանց ճանաչողական կարողությունների, մարդու գործունեությունը անհնար է: Ճանաչողական կարողությունները զարգանում են գործունեության մեջ : Այս նկատառումներից ելնելով՝ կարող ենք ասել, որ սովորողի համակողմանի զարգացման համար բավականին արդյունավետ միջոց է ուսումնական գործընթացում միջառարկայական կապերի կիրառումը: Միջառարկայական կապերի

օգտագործումը առավել ոյուրին է դարձնում աշակերտների հետաքրքրությունների, աշխարհայացքի ճևավորման և այլ խնդիրների լուծումը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ դասի ընթացքում միջառարկայական կապերի ճիշտ համադրումն ու կիրառումը սովորողին տալիս է հնարավորություն մեկ դասի շրջանակներում ստանալ մի շարք կարողունակություններ, գործնական աշխատանքների ժամանակ կիրառել դրանք, ինչի արդյունքում, վստահաբար, զարգանում է վերջինիս մետաճանաչողությունը, ինքնուրույնությունը, և զովորողը ձեռք է բերում համալիր գիտելիքներ մի շարք առարկաների ինտեգրման շնորհիվ:

Չետագոտության թեմայի արդիականությունը: Սույն հետագոտության արդիականության համար հիմք է հանդիսացել ուսումնական գործընթացում գիտելիքից բացի ճանաչողական կարողություններով սովորողին ապահովելու անհրաժեշտությունը, ինչը, կարծում ենք, խիստ կարևոր հանգամանք է 21-րդ դարի մարդու կենսագործունեության համար, և որի համար բավականին արդյունավետ միջոց է առարկայական ինտեգրումը:

Չետագոտության նպատակը: Ցույց տալ դասի ընթացքում ուսուցչի կողմից միջառարկայական կապերի ստեղծման նշանակությունը սովորողների մետաճանաչողության զարգացման համար:

Չետագոտության խնդիրը: Չետագոտության խնդիրն է ցույց տալ միջառարկայական կապերի ստեղծման, ինտեգրված դասերի օգնությամբ սովորողների մետաճանաչողության զարգացման եղանակներն ու ուղիները:

ԳԼՈՒԽ 1 ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1 Միջառարկայական կապերի դերը ուսումնական գործընթացում

Այսօր գիտելիքից բացի սովորողից պահանջվում են մի շարք այլ կարողունակություններ, որոնք թույլ կտան վերջինիս ճիշտ դրսևորվել, կողմնորոշվել կյանքի ցանկացած իրավիճակում, ինչը, կարծում ենք, պակաս կարևոր չէ: Սովորողը պետք է դասին լինի ակտիվ, կարողանա ընտրել, դասդասել, պարզաբանել, հիմնավորել, փաստարկել, հետազոտել ու կշռադատել: Այս ամենն իմանալն ու կարողանալը, կնշանակի՝ ունենալ գիտակցական բարձր մակարդակ, ճանաչողական կարողություններ, ինչն էլ այսօր կարևոր է կրթական համակարգում:

Անձի համակողմանի զարգացումն իրենից ենթադրում է, որ ցանկացած դժվարություն մարդ կարող է կառավարել՝ հենվելով իր իմացական ու գործառական ներուժի վրա: Ուստի կրթության արդիականացման հիմքը հենց ինքնուրույն, նախաձեռնող ու նորարար սովորող ունենալու վերջնարդյունքն է: Այս բոլոր գործընթացներում իր դերն ունի հարակրթական ուսումնական հաստատությունը, ուսուցիչը, ճիշտ պլանավորած դասը, որտեղ սովորողը կարող է բացահայտել աշխարհն ու ինքն իրեն: Սովորողի ճանաչողական կարողությունները միմյանցից առանձին չեն դրսևորվում, սա մի բարդ համակարգ է, ուստի ճանաչողական ունակությունների զարգացումն ապահովելու, սովորողներին ընդհանրական գիտելիքներ տալու համար ուսուցիչը հաճախ է օգտագործում համագործակցային մոտեցումներ՝ ի դեմս ինտեգրված դասի: Ցանկացած ուսումնական առարկա փոխլրացնում է մեկը մյուսին, դառնում շարունակողը, լրացնողը, ամբողջացնողը: Նորօրյա աշխարհում, պայմանավորված կրթական նոր պահանջներով, մեծ նշանակություն ունի առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը:

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ իրականություն միջառարկայական կապերով: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը¹: Ուստի կարող ենք ասել, որ

¹ И. П. Подласый. Педагогика начальной школы, М. 2000, с. 233.

միջառարկայական կապերն էլ ավելի արդյունավետ են իրականացվում, երբ ուսուցիչը տեսական հատվածին տրամաբանական շարունակություն է ապահովում գործնական հանձնարարություններ տալով: Սա, իհարկե, խթանում է նաև մետաճանաչողության զարգացմանը:

Ինչպես նշեցինք, միջառարկայական կապեր ստեղծելու արդյունավետ եղանակ է ինտեգրված դասերի անցկացումը: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որի շրջանակներում մեկ հասկացության ուսուցման ժամանակ տեղի է ունենում մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ, որը նպաստում է ուսուցանվող նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ: Ինտեգրված դասի պլանավորումը ենթադրում է տարբեր առարկաների ուսուցիչների համագործակցություն: Նման դասերի ժամանակ կարելի է իրավիճակներ ստեղծել, որ սովորողը մտածի և ինքնուրույն հասկանա առաջադրված խնդրի լուծման եղանակները: Այս գործընթացի ժամանակ վերջինիս մեծապես կարող է օգնել մետաճանաչողությունը:

Չարգացած մետաճանաչողություն ունեցող սովորողը ջանք է գործադրում խնդրի տեսակը ճանաչելու, առաջադրանքը վերլուծելու, իրեն արդեն իսկ ծանոթ խնդիրների հետ համեմատելու, նմանությունները և տարբերությունները որոշելու հարցում, իսկ մյուս դեպքում՝ այն արդեն իսկ մետաճանաչողական փորձի առկայություն է ենթադրում, երբ աշակերտը, առանց ջանք գործադրելու, կարողանում է որոշել խնդրի լուծման համար անհրաժեշտ ճանապարհը²: Ուսուցչի համար կարևոր է սովորեցնել և նպաստել, որ սովորողը սովորածը մտապահի: Յուրաքանչյուր սովորող ունի իր ինքնաճանաչումը, և մենք չենք կարող ստիպել նրանց սովորել, բայց կարող ենք ստիպել մտածել: Որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև խորությունը: Շատ կարևոր է նաև հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի անհատական կարիքները, քանի որ նրանցից յուրաքանչյուրը տարբեր կերպ է ընկալում նոր տեղեկատվությունը: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է նպաստել երեխայի կրթության

² http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2021_6_117_119.pdf Մետաճանաչողությունը կրթության մեջ:

իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները³»:

Սովորողին մոտիվացնելու, դասի մեջ ներգրավելու համար կարևոր հանգամանք է նաև ուսուցչի կողմից ստեղծած բարոյահոգեբանական բարենպաստ միջավայրը: Առանց այս հանգամանքի, ուսուցման ընթացքը հնարավոր չէ կառավարել, ցույց տալ սովորողներին իրենց դերերն ու պարտավորությունները: Որպեսզի մանկավարժները դասարանում կարողանան ստեղծել հոգեբանական բարենպաստ մթնոլորտ, նրանք պետք է իմանան դրանց բնութագրիչները: Դրանցից են.

1. Դասարանում երեխաների միջև առկա են աշխույժ, բարիդրացիական փոխհարաբերություններ, լավտեսական տրամադրություն, փոխհամագործակցություն: Նրանք հաճույքով են կատարում խմբային աշխատանքներ: Հարաբերություններում գերակայում է խրախուսումը, իսկ քննադատությունն իրականացվում է նուրբ տոնով:
2. Դասարանում իշխում է հարգանքի մթնոլորտ: Այստեղ մշտապես բոլորն իրենց պաշտպանված են զգում:
3. Դասարանում բարձր են գնահատվում անձի այնպիսի որակները, ինչպիսիք են՝ պատասխանատվությունը, աշխատասիրությունը, արդարամտությունը, անշահախնդրությունը և այլն:
4. Սովորողներն ակտիվ են, աշխույժ: Նրանք արագ արձագանքում են, եթե պետք է ինչ-որ օգտավետ աշխատանք կատարել⁴:

Ուսուցիչը, նկատելով աշակերտների դրսևորած ընդունակությունները, պետք է ուղղորդի հասնելու լիարժեքության, ինքնադրսևորման և ինքնաբավարարման: Այս ձևով զարգանում են նաև մտածողությունը, երևակայությունը: Ասենք նաև, որ դասը պետք է պլանավորել այնպես, որ տվյալ թեման ունենա դաստիարակչական, բարոյական, մարդասիրական, անհատի ձևավորման, բնության նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի, հայրենասիրության զգացումի , մասնագիտության գիտակցված ընտրության կողմնորոշում: Ուսուցման արդյունավետությունը չափվում է ոչ միայն և ոչ այնքան աշակերտի յուրացրած գիտելիքներով, որքան նրա ձեռք բերած կարողություններով՝ շեշտը դնելով արդյունքի վրա, այսինքն՝ ինչ կարող է նա անել: Այս խնդիրը լուծելի է դառնում, երբ ուսուցման ընթացքում վերաբաշխվում են հիմնական արժեքները. Տ՝ ուսումնառության ընթացքում

³ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345> «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ2:

⁴ [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013\(4\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013(4).pdf) Գիտամեթոդական հանդես, «Նախաշափիղ», Երևան, 2013, էջ 10:

ուսումնառողը պասիվ ընկալողից վերածվում է ակտիվ և գործուն մասնակցի, դասավանդողը հրաժարվում է սովորեցնողի, վերահսկողի, խրատողի իր դերից և դառնում է այդ գործընթացի կազմակերպող, խորհրդատու և որպես գործընկեր՝ ուսումնառողի հետ մասնակցում է հետազոտական աշխատանքներին:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Նա պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է հետևողականորեն կատարելագործել իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ⁵»:

Ուսումնական գործընթացը պետք է հետաքրքիր լինի սովորողի համար: Նյութի անսովոր ներկայացումը, խնդրի լուծման վրա հիմնված ուսուցման տեխնոլոգիայի օգտագործումը կարող է մեծացնել հետաքրքրությունը կրթական գործունեության նկատմամբ:

⁵ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345> «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ5:

1.2 Միջառարկայական կապերի ազդեցությունը սովորողների համակողմանի զարգացման վրա

Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացում իրականացնում են մեթոդոլոգիական, կրթական, զարգացնող, դաստիարակչական, կառուցողական գործառույթներ: Ուսուցիչը միջառարկայական կապերի միջոցով նպաստում է սովորողների գիտելիքների ինտեգրմանը, բազմակողմանի զարգացմանը, ինտելեկտի կատարելագործմանը, մտահորիզոնի ընդարձակմանը:

Միջառարկայական կապերը խթանում են սովորողների՝ դիտարկելու, հետազոտելու, հայտնագործելու, ստեղծագործելու, եզրահանգելու կարողությունների ձևավորմանը, ակտիվացնում է աշակերտների

մտածողությունը, զարգացնում տրամաբանական մտածողությունը, նպաստում ճանաչողական կարողությունների ակտիվացմանը:

Միջառարկայական կապեր իրագործվում են և՛ դասի ընթացքում, և՛ արտաժամյա պարապմունքների և՛ էքսկուրսիաների ընթացքում, նման ձևով ուսուցիչը կենտրոնացնում է համարյա բոլոր առարկաներից ստացած գիտելիքները:

Ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա, պետք է ունենա զարգացնող, դաստիարակող բնութագիր, որը ենթադրում է սովորողների բարոյական գաղափարների, վարքի համարժեք ձևերի մշակում՝ բոլոր մասնակիցների ներառմամբ կրթական գործընթացում⁶:

Կրթության կարևորությունը գնահատելով՝ պետք է ընդունենք, որ կրթության միջոցով կարելի է հասնել հասարակական մտածողության, հոգևոր-բարոյական և մշակութային արժեքների զարգացման: Ինտեգրված ուսուցումը, ապահովելով տարբեր առարկաների գիտելիքների համակցումը, նպաստելու է հետազոտական հմտությունների, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և դրանց հիմքի վրա նրանց կայուն զարգացման իրականացմանը: Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը:

Այստեղ շատ կարևոր է ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումը, քանի որ նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության արդյունավետությունից է կախված ինտեգրված դասի որակը: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է համագործակցել գործընկերների

⁶ Екжанова Е. А. Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов, Москва. 2008, стр.52.

հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով⁷»: Ինդեգրված դասի ժամանակ ինտեգրվող առարկաների բաղադրիչները կարող են լինել ավել կամ պակաս: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից:

Դասարանը սովորողների կայուն կազմակերպական խումբ է, որը միավորված է համատեղ օգտակար գործունեություն իրականացնելու մղումներով և խմբի անդամների միջև առողջ ու համագործակցային հարաբերություններ ստեղծելու անհրաժեշտությամբ: Հենց այդ պատճառով հարկավոր է, որ սովորողները կարողանան կոլեկտիվում արդյունավետ աշխատել, իրաի ոգևորել ու մոտիվացնել, սովորել իրարից ու սովորեցնել իրար: Սա կարծում ենք անչափ կարևոր հանգամանք է:

Այսպիսով, կարծում ենք , որ ինտեգրված դասերի կազմակերպման ընթացքը բավականաչափ արդյունավետ կարող է լինել մասնակից ուսուցիչների համար: Սա համագործակցման ու փորձի փոխանակման անմիջական գործընթաց է, որի ժամանակ բոլոր ուսուցիչները հավասարաչափ ջանք են գործադրում, որպեսզի ուսուցման գործընթացը լինի ասարդյունավետ:

Որպեսզի միջառարկայական կապերը դասապրոցեսին ունենան արդյունավետություն, հարկավոր է, որ ուսուցիչը նույնպես ունենա համապատասխան իմացական կարողությունները: Այս պարագայում անչափ կարևոր է ուսուցիչների համագործակցությունը մեթոդական միավորումներում: Ուսուցիչը, համագործակցելով մեթոդավորման մյուս անդամների հետ, կուստակում է նոր գիտելիքներ, հմտություններ, իր առջև դնում մի շարք իրավիճակային խնդիրներ ու փորձում լուծումներ գտնել: Հարակից առարկաների հիմունքների իմացությունը նույնպես ուսուցչի համար պարտադիր է, քանի որ սովորողների հայացքների, համոզմունքների, ընդհանրապես աշխարհայացքի ձևավորումը նաև իրականացվում է միջառարկայական կապերի միջոցով⁸ : Այստեղից կարող ենք եզրահանգել, որ առողջ համագործակցությունը ուսուցիչների միջև կարող է նպաստել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Խորհրդակցական այս օղակի գործունեության հենքում մանկավարժական որակների բարձրացումն է, որն ուղղակի կերպով պայմանավորում է ուսումնական գործընթացում կրթական չափորոշչով

⁷ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345> «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 7:

⁸ <http://ijevanlib.yso.am/wp-content/uploads/2017/12/mankavarjutyun.pdf> Յու. Ամիրջանյան, Ս. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան, 2005, էջ 84:

սահմանված վերջնարդյունքների ի կատար ածումը, ուստի կարելի է պնդել, որ յուրաքանչյուր ուսուցիչ կարող է իր օրինակով խրախուսել մյուսին՝ ի նպաստ կրթական համակարգի բարելավման և ուսումնական գործընթացի անցնցում իրականացման: Որքան մեծ է ուսուցչի պատասխանատվության զգացումը, կատարելագործվելու, որպես նորորոր հանդես գալու ցանկությունը, այդքան բարձր է կրթության որակը:

Կրթության որակ հասկացությունը սերտորեն առնչվում է կրթության մատչելիությանը և, չնայած սրանք երկու տարբեր հասկացություններ են, այնուամենայնիվ փոխլրացնում են միմյանց: Եթե կրթության որակը հնարավոր չէ առանց կրթության մատչելիության, ապա մատչելիությունը իմաստագրվում է առանց համապատասխան կրթական որակի ապահովման: Որակյալ կրթությունը միտված է ապագային և ենթադրում է ոչ միայն նախկինում առկա գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլև նոր գիտելիքների ստեղծում անհատապես կամ կոլեկտիվ եղանակով: Գիտելիքաստեղծ գործունեությունը որակյալ կրթության հիմքերից է, որը կարող է բերել գիտելիքահեն տնտեսության, ժողովրդավարական հասարակարգի զարգացման, կյանքի զարգացման նոր ուղիների ու մոդելների ստեղծման ու զարգացման⁹:

Ստացվում է, որ կրթության որակ ու մատչելիություն հասկացությունները խիստ համադրելի են, ուստի առարկայական ինտեգրման հիմքում պետք է դրվի մատչելիությունն ու հասանելիությունը

⁹ <http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf> Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում, էջ 4:

ԳԼՈՒԽ 2 ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

2.1 Միջառարկայական կապերի կիրառումը կենսաբանության դասին

Մարդն իր գիտելիքի կարողությունների ու հմտությունների հիմնական պաշարը ստանում է հանրակրթական ուսումնական հաստատությունում, որտեղ կայանում է անձի կրթական ու դաստիարակչական առանցքային գործընթացը, ուստի հենց այստեղ է, մանուկը, պատանին, դեռահասը սկսում գործել ինքնուրույն, հանդես գալ նախաձեռնողի դերում և կուտակել համակողմանի գիտելիքներ:

Կենսաբանությունը հիմնարար գիտություն է, որն իր ուշադրության հսկայական մասն է հատկացնում կենդանի և ոչ կենդանի էակների փոխհարաբերությունների խնդրին: Կենսաբանությունբոլոր բաժինները՝ ինչպիսիք են մարդու գենետիկան, մոլեկուլային կենսաբանությունը, բջջաբանությունը, ֆիզիոլոգիան, էկոլոգիան, կենսաքիմիան, կենսաֆիզիկան, ապահովում են կյանքի գործընթացների օրինաչափությունների համապարփակ ուսումնասիրություն և երևույթներն իրենց տարբեր փուլերում: Կենսաբանական կրթության ոլորտում պահանջվում է առանձնացնել մարդուն՝ որպես ուսումնասիրության օբյեկտի: Կարևոր է հաշվի առնել նաև այն, որ իր աշխատանքային գործունեությամբ մարդն էապես վերափոխում է շրջապատող աշխարհը: Հաճախ այդ փոփոխությունները բերում են երկարատև էվոյուցիայի ընթացքում բնության մեջ ձևավորված փոխադարձ կապերի լուրջ խախտումների: Այդ պատճառով երևան են գալիս էկոլոգիական սուր հիմնահարցեր, որոնց լուծումը պահանջում է օգտագործել գիտատեխնիկական և սոցիալական առաջընթացի նվաճումները: Կենսաբանության դասընթացը նպատակ է հետապնդում դաստիարակել կենսաբանական և էկոլոգիական գրագիտությամբ օժտված անձ:

Հիմնական դպրոցում կենսաբանության ուսուցումը պետք է ապահովի կյանքի հիմնական հատկությունների, կազմավորվածության տարբեր մակարդակների վրա կենդանի նյութի կառուցվածքա-գործառնական հիմնական դրսևորումների, օրգանիզմների բազմազանության, մարդու, որպես կենսաբանական և սոցիալական էակի, օրգանական աշխարհի պատմական զարգացման հիմնական ուղիների, կենդանի օրգանիզմների և միջավայրի միջև փոխազդեցությունների, բնական համակեցությունների, բնության վրա մարդու ազդեցության վերաբերյալ գիտելիքների ձեռք բերումը, մարդու հիգիենիկ դաստիարակությունը՝ առողջ

կենսակերպի ձևավորման, մարդու ֆիզիկական, հոգեկան և բարոյական առողջության ապահովման նպատակով¹⁰:

Հաշվի առնելով առարկայի առանձնահատկությունները՝ կարծում ենք, որ ուսուցիչը լայն հնարավորություններ ունի առարկայի ընթացքում հետաքրքրել սովորողին, ուսուցման գործընթացը կապել կյանքի մի շարք երևույթների ու իրավիճակների հետ, ոչ միայն խոսել, այլև նաև ցույց տալ օրինակներով, սովորողի վրա դնել պարտականություններ: Այստեղ շատ կարևոր է արտադասարանական դասերի իրականացումը, երբ սովորողը հենց բնության մեջ ուսումնասիրի, տեսնի ու շոշափի կենսաբանությունը: Հենց այդտեղ է, որ միջառարկայական կապերի ստեղծումն ուղղակի անխուսափելի է: Ակնհայտ է կենսաբանության կապը մի շարք ուսումնական առարկաների և գիտությունների հետ, որոնք կարող են բարձրացնել սովորողի հետաքրքրությունը բնագիտական ուղղվածություն ունեցող առարկաների նկատմամբ: Կենսաբանության դասին սովորողների համար հետաքրքիր ու ճանաչողական դաս ապահովելու համար միայն միջառարկայական կապերի առկայությունը բավական չէ: Պետք է դասի պլանավորման վրա ևս ուշադրություն դարձնել:

Մեր մանկավարժական փորձից բերենք մի խոսուն օրինակ: Դասն իրականացվել է նախագծային մեթոդաբանությամբ, որի ընթացքում իրականացրել ենք ինտեգրված նախագծային աշխատանք:

Մինչ բուն աշխատանքի նկարագրությանն անցնելը, խոսենք նախագծային ուսուցման և սովորողների հաջողության հասնելու մոտիվացիայի վրա նախագծային աշխատանքի հնարավոր ազդեցության և ընդհանրապես այս ուսուցման ձևի առանձնահատկությունների մասին: Ընդհանուր առմամբ նախագծային ուսուցումը կարելի է դիտարկել որպես դիդակտիկ համակարգ, իսկ նախագծային մեթոդը՝ որպես այդ համակարգի բաղադրիչ, որպես մանկավարժական տեխնոլոգիա, որը ներառում է ոչ միայն գիտելիքների ինտեգրումը, այլև գիտելիքների կիրառումը, նորերի ձեռքբերումը: Նախագծային մեթոդը հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն է, որի կենտրոնում սովորողն է: Այստեղ ուսուցչի մասնակցությունը սահմանափակվում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դերով: Այստեղից կարելի է եզրահանգել, որ նախագծային մեթոդի հիմնական նպատակը սովորել սովորեցնել սովորողին՝ ամեն կերպ խթանելով վերջինիս ինքնուրույն գործելու, պրպտելու, գտնելու, գիտելիքը գործնականում կիրառելու, սեփական կարծիքն ու դիրքորոշումն առանց այլ ազդակների

¹⁰ <https://escs.am/am/news/6700> Հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների և օրինակելի ծրագրերի նախագիծ /Կենսաբանություն/

ներգործության հայտնելու կարողության ձևավորումն ու զարգացումն է: Այս համատեքստում մեթոդի կիրառումը առանձնակի ուշադրության է արժանի հատկապես միջին և ավագ դպրոցներում՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները: Այս տարիքային խմբի սովորողների մոտ հաճախ հանդիպում է անկանոն վարք, սովորելու նկատմամբ անտարբերություն, հետաքրքրության բացակայություն:

Հիմք ընդունելով հանրակրթության պետական նոր չափորոշիչը՝ սահմանենք միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակություններից սովորել սովորելու կարողունակությունը, որը ենթադրում սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն¹¹:

Մեջբերումը կրկին փաստում է, որ աշակերտակենտրոն ուսուցումը 21-րդ դարի սովորողի համար ուղղակի անհրաժեշտություն է: Այս հանգամանքը, ինչպես արդեն նշել էինք, պայմանավորված է մի շարք գործոններով: Նմանօրինակ գործոնները ուղիղ կերպով սահմանում են կրթական համակարգի նոր պահանջներ, որոնց առանցքում սովորողն է՝ որպես կրթական համակարգի առաջնային շահակից: Եթե ավանդական ուսուցումն ու դրա մեթոդները ինչ-որ առումով սահմանափակվում էին սովորողի մասնակցությունը բուն դասապրոցոսի այս կամ այն հատվածում, ապա ինտերակտիվ, աշակերտակենտրոն ուսուցումը սովորողին հնարավորություն է տալիս լինել դասապրոցոսի կիզակետում՝ բանավիճել, երկխոսել, հետազոտել, կիրառել, ՏՀՏ գործիք, այլ խոսքով՝ դուրս գալ կադապարներից ու կարմիր գծերից՝ դասից քաղելով առավելագույն գիտելիք, հմտություն:

Այս համատեքստում բնավ չենք սովորում ուսուցչակենտրոն ուսուցումը, այդուհանդերձ, հարկ է արձանագրել, որ հետազոտող աշակերտն էլ ավելի մոտիվացված է ազատ դասի ժամանակ:

¹¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788> ՀՀ Կառավարության որոշում

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ՝ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՄԲ

ԹԵՄԱ՝ «Ծածկասերմ բույսերի ուսումնասիրությունը բնության գրկում»

ԱՌԱՐԿԱ՝ «Կենսաբանություն»

ԻՆՏԵԳՐԱԾ ԱՌԿԱՆԵՐ՝ «Աշխարհագրություն», «Բժշկագիտություն», «Էկոլոգիա»

ԴԱՍԱՐԱԲ՝ 7-րդ




Նախագծային աշխատանքի համար առաջարկվել էր բնության գրկում ուսումնասիրել ծածկասերմ բույսերի կառուցվածքը, տեսակները, այնուհետև կազմել խմբեր ու պարզել դրանց կառուցվածքը, կիրառման ոլորտները մարդու կյանքում, պահպանության և տարածման առկա խնդիրները ԶԶ տարածքում:





Չայտնի է, որ բույսերը հսկայական դեր են խաղում բնության մեջ: Նրանք հանդիսանում են սննդանյութերի առաջնային աղբյուր բոլոր կենդանի օրգանիզմների համար, քանի որ արևի լույսի էներգիայի հաշվին վեր են ածում անօրգանական նյութերը օրգանականների: Բացի այդ, բույսերը նաև արտադրում են թթվածին, որն անհրաժեշտ է շնչառության համար: Ծածկասերմ բույսերի արմատները և ընձյուղները անվանում են վեգետատիվ օրգաններ: Դրանք ծառայում են սնուցման, աճման, զարգացման և շնչառության համար: Տերևների և ցողունների ձևը և կառուցվածքը բարդ է և բազմազան: Տերևները առաջանում են ցողունի վրա, տերևները լինում են պարզ և բարդ: Ցողունի վրա բազմանում են բողբոջներ, որոնք լինում են վեգետատիվ՝ տերևներ առաջացնող և գեներատիվ՝

ծաղիկներ առաջացնող: Բողբոջը սպազա ընձյուղի սաղմն է: Գարնանը այդ բողբոջներից առաջանում են կոր ընձյուղներ:

Սովորողներն աշխատանքի գործնական հատվածում կուսումնասիրեն ծառեր, թփեր և խոտաբույսեր, կգտնեն նմանություններ ու տարբերություններ, կդասակարգեն դրանք, օրինակ՝ առաջնային սննդի նպատակով օգտագործվում են ցորենը, շաքարի ճակընդեղը, շաքարեղեգը, կարտոֆիլը, բրինձը, իսկ բուժական նպատակներով՝ հայտնի են կատվախոտը, անանուխը, չիչխանը, դաղձը: Մի քանի նմուշներ սովորողները կվերցնեն ավելի մանրամասն ուսումնասիրություն համար: Այսպիսով, համադրելով շրջագայության ընթացքում հավաքագրված նմուշները, համացանցից, գրքերից ստացված տեղեկությունները, սովորողները կպատրաստեն նախագծային աշխատանք, որը կներկայացնեն անիմացիոն հոլովակի և սահիկաշարի միջոցով:

ՇԱԾԿԱՍԵՐՄ ԲՈՒՅՍԵՐ





Ստացվեց, որ սովորողն ինքը դարձավ հետազոտող, փնտրեց, գտավ, համակարգեց՝ արդյունքում հավաքելով գիտելիքների ու կարողունակությունների մեծ պաշար: Ընդհանուր աշխատանքային միջավայրի արդյունքում որևէ սովորող ուղղակիորեն չի կարող պասիվ դերում լինել, քանի որ ինքն է իր գիտելիքը հավաքում, այստեղ ուսուցչի միջամտությունը բացակայում է: Աշխատանքի ընթացքում կապ ստեղծվեց մի շարք գիտությունների հետ, որի արդյունքում սովորողները կուտակեցին համակողմանի գիտելիքներ ուսումնասիրվող թեմայի

մասին: Նրանք սովորեցին բույսերի նշանակությունը մարդու կյանքում, բազմացման և զարգացման հնարավորությունները բնակլիմայական տարբեր պայմաններում, դրանց բժշկական նշանակությունը, իմացան առկա էկոլոգիական խնդիրները: Կարծում ենք, որ նմանօրինակ աշխատանքներն իրապես կարող են բարձրացնել սովորողների հաջողության հասնելու, նոր գիտելիք ու կարողունակություններ ձեռք բերելու մոտիվացիան: Այսպիսով նման աշխատանքի ուսուցանող արդյունքը հետևալ ձեռքբերումներն էին.

- Սովորողների ստեղծագործական, հայրենագիտական, աշխարհագրական, էկոլոգիական, բժշկագիտական ճամփորդական հմտությունների զարգացում, ամրապնդում, կողմնորոշում տեղանքում:
- Շրջակա բույսերին ծանոթացում:
- էկոլոգիական աշխարհայացքի ձևավորում:
- Վայրի բույսերի ուսումնասիրություն, ծանոթացում, հավաքում:
- Սերմերի տարածման եղանակների ուսումնասիրում:

Աշխատանքի ընթացքում սովորողներն էլ ավելի մտերմացան, քանի որ բոլորով աշխատում էին մեկ նպատակի շուրջ: Առարկայական ինտեգրումը այն կարևոր ազդակն է, որն ունակ է սովորողին տալ այն գիտակցումը, որ ինքը կարող ուժ է, իսկ գիտելիքն այդ ուժի տարբեր դրսևորումների արտահայտումն է, որն էլ իր հերթին բարեկեցիկ ապագայի հենասյունն է, ուստի թե՛ մակավարժը, թե՛ սովորողը պետք է փորձեն անդադար ինքնազարգանալ, կրթությունը դիտարկեն ոչ թե պարտականություն կամ անհրաժեշտություն, այլ ուղի, որի վերջնարդյունքը սոցիալական միջավայրում արժանի տեղ ու դիրք ունեցող քաղաքացին է:

Մեծագույն համոզմունք ունենք, որ այս ուսումնասիրության արդյունքը կլինի, որ բարձնարա նաև մեր՝ ուսուցիչներիս մոտիվացիան, այն միանշանակ կօգնի մեզ մեր մանկավարժական գործունեության ընթացքում:

ԵՇՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Կարևորելով ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպման նշանակությունը՝ կցանկանանք ևս մեկ անգամ կարևորել միջառարկայական կապերի դերը սովորողների համակողմանի զարգացման համար: Միջառարկայական կապերի օգտագործումը առավել դյուրին են դարձնում այս գործընթացը, քանի որ սովորողն այդ ակտիվ միջավայրում լիարժեք կարող է բավարարել իր հետաքրքրությունները, գտնել իրեն հուզող հարցերի պատասխանները:

Կարծում ենք, որ այստեղ մեծ է հատկապես ուսուցչի դերը: Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, անուշտ, տեղյակ են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին: Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը, մտածողությունը, ինչպես նաև մետաճանաչողությունը: Հաշվի առնելով կենսաբանության բովանդակային առանձնահատկություններն ու դրա կապը մարդու կյանքի ու յենսագործունեության հետ՝ վստահ ենք, որ առարկայի կոնկրետ առարկայական օրինակներն ու միջառարկայական կապերի առկայությունը դասին սովորողի համար դասը կարող են դարձնել սեփական հետաքրքրությունները բավարարելու անփոխարինելու միջոց: Արդյունքում՝ սովորողը կարող է հասնել կրթական չափորոշչային պահանջներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1 http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2021_6_117_119.pdf
Մետաճանաչողությունը կրթության մեջ:
- 2 <https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345> «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
- 3 [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013\(4\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013(4).pdf)
Գիտամեթոդական հանդես, «Նախաշավիղ», Երևան, 2013:
- 4 <http://ijevanlib.yasu.am/wp-content/uploads/2017/12/mankavarjutyun.pdf> ՅՈՒ.
Ամիրջանյան, Ս. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան, 2005:
- 5 <http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf> «Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում»:
- 6 <https://escs.am/am/news/6700> Հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների և օրինակելի ծրագրերի նախագիծ /Կենսաբանություն/:
- 7 <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788> ՀՀ Կառավարության որոշում:
- 8 И. П. Подласый. Педагогика начальной школы, М. 2000.
- 9 Екжанова Е. А. Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов, Москва. 2008.